

ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 «Պաշտոնի» համար  
 Տարեկան 12 Ձր.  
 Վեցամ. հայ 6 »  
 Արտատպանի համար  
 Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 \$-ի  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԱՄԵՐԻԿԱՅ ՎՃԱՐԵԼԻ  
 Դրամագումակ սողառացի  
 հրեային համար 40 սանթիմ  
 է. իսկ վերջին երեսի համար  
 20 սանթիմ է. երեքին  
 ամեջի անգլալեզու համար  
 20 ՍՊ զեղը կրնայ  
 Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

# ՊԱՏՈՒՄ

Նախկին և զրաւ դրկեյ  
 Ամբարձարեանս հասցիին  
 —  
 Редакция на ввстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)  
 Իրոսթիւնիս չիւն տրուի  
 Արտատպանի ձեռքի  
 ( 20 ՍԱՆԹԻՄ )  
 Պաշտոնի համար ձեռքի  
 = 15 ՍԱՆԹԻՄ =

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱՐՋՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆԹԻԿ ՎՃԱՐԸ

### ԱՌ ԼՈՒՍԻՆ

Ո՛վ լուսին, ի՞նչու լալազին տխուր  
 կերթաս պահուածի ամպերու ետին.  
 Շողերդ ա՛լ հիմայ կիյնա՛ն ո՛հ անհուր  
 Այդ տեսքովդ կուտաս թախիծ միմ սրտին :

Երէկ դեռ փայլուն ունէիր ժպիտ,  
 Ի՞նչ պատահեցաւ, դալիւհար լուսին,  
 Ցաւ մուսիս միթէ, ի՞նչ է ցաւն սրտիդ,  
 Յայտնէ որ ողբամ, ես ա՛լ միասին . . .  
 Ու գուժեց ԼՈՒՍԻՆԿԱՅ  
 Թէ չկայ ԱՆԻՇԱՆ

Վառնա 20 նոյեմբ.

ՀՐԱԿՆ

### ՎՐԻՊԱԿ

Շարժումի նախորդ համարի  
 նախօգուածին մէջ, փոխանակ  
 Չայն Հայրենեաց հանդէսի պէտք  
 է ըլլայ «Ժողովուրդին Համար»  
 հանդէսի :

### ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները, եթէ փոքր ինչ պարտաճանաչութեան զգացմունք ունին, կարգացին մեր նախորդ ազդերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու անունները պիտի յայտարարուի Շարժումի մէջ : Գտնուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել. իսկ մէկ կարեւոր մասն ալ դեռ արձագանք չը տուաւ : Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակ կը տրուի լիւրջեւ դեկտ. 15ը : Մինչեւ այդ օրը պիտի սպասենք. ու այնուհետեւ իսկոյն պիտի հրատարակենք :

### ՄԵՐՈՒԹԻ ԶԱՋՈՐԴԸ

Անցեալ օր հեռագիրները հաղորդեցին որ Անգրանիկը, պաշարված լինելով թուրք զօրքերից, արողացել է ուղղակի թուրք զօրքի առջևից անցնել և ազատվել : Թուրքերը Սերորին վատութեամբ ձեռք ձգելուց և նրա գլուխը ուտելուց յետոյ, համոզվել էին թէ այլ եւս Տարոնը և իր շրջակայքերը հանգիստ պէտք է մնան : Բայց զուր յոյս, Սերորի հայրուկային արիւնտ դպրոցում մարզված և թրքական արիւնի համը առած կորիւն Անգրանիկը այսօր ամենհի առիւծ դարձած սարափեցնում է թուրք ազգաբնակչութիւնը և թուրք զօրքերին : Նա պաշտպան է հանդիսանում իր հալածական ու տանջվող եղբայրներին, արիւնի տեղ արիւն է թափում, գլխի փոխարէն գլուխ կտրում : Ոչ արեւստական ապստամբ, ժողովրդային ցաւերի հնոցի մէջ կռված ու կոփված Անգրանիկը չէ սպասում ոչ Դէլկասէի quasi բարերար միջամտութեան և ոչ նիկոլա ցարի բարեացակամ վայրկեանին : տեսնելով որ իր շուրջը ամեն ժամ, ամեն վայրկեան հայ գլուխը կտրվում է սոխի պէս, ինքն էլ փոխադարձաբար նոյնն է անում և իր եղբայրներին նոյն

նը գործելու հրաւիրում իր գործնական օրինակով : Հայկական դառն ու կորստաբեր իրակոնութեան մէջ, Անգրանիկի համար գոյութիւն չունեն սպասողական դրութիւնը, վարանումը և սուտ յոյսերը : այդ տեսակ ծոտի պուտի պատճառաբանութիւններով նա չէ թուլացընում ոչ իր ոգին և ոչ էլ իր շրջապատողներինը : նա անընդհատ գործում է, և մեռելային անգործութիւնը դատարկ պատճառաբանութիւններով արգարացընելու պէտքը չունի : Մեզ համար ցանկալի է որ Անգրանիկները ճեր մէջը շտաանան : մի քանի Անգրանիկներ, մանաւանդ եթէ դրանց մէջ նոյն քաջութիւնը և անվեհերութիւնը ունեցող մի երկու զարգացած մարդիկ էլ գտնվեն, բաւական են մեր ապստամբական գործը իր արժանի բարձրութեան վրա դնելու համար : Պէտք է խոստովանել վերջապէս որ մեր յեղափոխական մարմինների միջից կամաց կամաց շքանում են անձնազոհ յեղափոխականները, և այդ լինումէ ոչ այն պատճառով որ երկրի մէջ գտնված ժողովուրդը լուրջ քիչ յեղափոխական է քան մի քանի տարի առաջ : այլ նրա համար որ գործի գլուխ կանգնած մարդիկ ընդունակ չեն ապստամբ տարրի պահանջներին բաւականութիւն տալ : Սերորները եթէ յեղափոխական մարմինների տրամադրութեամբ շարժվէին և իրենց յոյսերը նրանց վրայ գնէին, այսօր փոխանակ առիւծներ լինելու, մի մի ոչխարներ պէտք է մնային : Վերջապէս ժամանակ է մեր յեղափոխութեան մէջ խրված ոչխարային ոգուն վերջ տալ : Երկուսից մէկը, կամ պէտք է բւերովին վերջ տալ յեղափոխական գործունէութեան և սպէն բան թողնել ժամանակի կարգադրութեան, կամ թէ պէտք է կազմակերպութիւնները ապստամբական հնոցի վերացել :

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրինա 17 նոյեմբ.

Շարժումի նախորդ թիւերու մէջ Համազասպ ստորագրութեամբ յօդուած մը կարդացինք, որով պարոնը աճապարած էր հանրութեան հաւատացնել թէ՛ Սուրինայի ազգային եկեղեցական գործերը բարւոքուած են, ու կը յուսար որ լաւ տպագայ մը պիտի ունենան : Դժբաղդաբար այդ յոյսը պարապ ելաւ : գործերը նոյն վիճակին մէջ են, ինչ վիճակի մէջ որ էին վեց ամիս առաջ, երբ ժողովուրդը հիշուեցաւ և թաղական խորհրդին պահանջեց գործերու կարգաւորումը, շեշտելով որ ութ դարուան մէջ եկեղեցին ութ հարիւր ֆրանք չունի, որով կարելի ըլլար սենեակ մը վարձել մեր մանուկներ կրթելու համար : Թաղականները տեսնելով որ ժողովուրդը հաստատ է իր որոշման վրայ, սպառնացան կառավարութեան միջոցով պատու պահանջել, և նոյն իսկ արգիլել տալ այն լրագրին մուտքը ի Բումանիա, որուն մէջ Սուրինայի քահանային թերութիւնները մատնանիչ կրլուէր : Գործերը այդ վիճակին մէջ էին, երբ Վառնայի Սարգիս քահանան հոս եկաւ, ու իր քարոզներով յորդորեց ամենուս միահամուռ աշխատիլ ազգային գործերը կարգի բերելու : Տէր հօր յանձնուեցաւ ժողովուրդը հրաւիրել թաղականներ ընտրելու : Թաղականութիւնը ընտրուեցաւ Սահմանադրութեան համաձայն և զպրոցի բացումը պարտադիր ըրաւ : Սարգիս քահանայի մեկնումէն անմիջապէս ետքը, տեղիս քահանան իր արբանեակներով միասին սկսան խժրժել թաղականութեան ընտրութիւնը : խոսվութիւնները նորէն սկսուեցան, եկեղեցին, ժամկոչի բացակայութեան պատճառաւ քանի մը անգամ բոլորովին գոց մնաց : այդ

ՎԱՐԴՕ



ցանք նոր ընարութիւն կատարելու բաւական նպատակաւորութեամբ եղանակով մը: Բնականութեան մեծամասնութեան նայելով շահած են Սապայեան, Երկնեան եւ Մանկունի սրբազանները: անշուշտ ասոնց մէկը պիտի որոշուի վճարուելու եւ մտաբերելու, եթէ յանկարծ Երկնեան խնամքով ստամբակին ապականիչ ձեռքը չհարկ իրեն ներկայած ցանկին առաջին տողերուն: Ամէն պարագայի մէջ կը յուսացուի այն անգամ քիչ շատ շարժար կաթողիկոս մը ունենալ: վերի երեքը ալ լաւ են քանի որ լաւագոյններ չունինք: Մեզի համար նախընտրելի է ան որ իր պաշտօնը պիտի եղածին պէս կը կատարէ, զի կիրիկիոյ կաթողիկոսը բաւական ընկերներ ունի: ընդարձակ է իր թեմը, եկեղեցական ու կրթական գործեր կազմակերպելու մը կարող են: Սիսի եկամուտները մասակարարել օգտակարին, անհրաժեշտին յատկացնելով: Ամենամեծ աշխուժութիւն մ'ալ տեղական կառավարութեան ոտնձգութիւնները խորամակնոր մը Ուշիոյ անդամները խնամել, ջանալ անոնց մտաւոր ու բարոյական մակարդակը բարձրացնել, պաշտպանելով անոնց իրաւունքները ամէն գնով ու արեան զոհողութիւնով: Վերջապէս քաջութիւն ունեցող, սիրաւ կրող կրօնականի մը համար հիանալի ասպարէզ մէջ կ'ընկերան, ուր պարտքը կատարողը, արժանաւորութեան փառքը եւ ազգին համակրանքը կը վաստակէ այժմ եւ յաւիտ:

Որքան մէկ կը մնայ համբերել ու տեսնել, որքան ու գնահատել նոր ընտրելին գործունէութեան արդիւնքը իր պատեհ ժամանակին: Ծօղան Ս. ԳՈՌԱՅՐ

ՄԵՐՈՒԿԸ ԵՒ ՇՈՒՆԸ

Միտն, երբ վերջին անգամ Մշոյ դաշտէն ճամբայ ինկաւ դէպի Ստամբուլ, արդէն 50 տարեկան էր:

Չէր ուշեր ելլալ պաշտօնութեան, բայց ուրիշ ճար մը չունէր: Թուրքեր կոտորեցին իր երեք զաւակները, անոնց կիները և սպանիկ տղաները: ամօնքն ալ ձեր Միտի վրին մնացին: Պետք էր զանոնք կերակրել և հաշտել:

Անոնք եկաւ Կոստանդուպոլիս, յուսումով որ զանոնք մէջը կրնար ահա գրեթէ քանդակ լինեն: Կրիլ մեծ ընտանիքի մը համար օրական պարտաւոր հայտնաբերու:

Չինք որ էր օր Պոլիսեկան էր: չարունակ կերթար գործի, բուլակին ալ ստակ կը շահէր, բայց օր մըն ալ, մեծ ծանրկէկ սընտուկ մը շարկից, ու մէջը սարսափելի կերպով ցափեցաւ: Ընկերները Միտն տարին տուն և նա հոն պառկեցաւ:

Միտն կը ասնջուէր իր զովուշին մէջ: օր մըն ալ զգաց որ քաղաքը կը որոտայ, ի՞նչ եղաւ: չը հասցաւ: դիշերը ընկերները շեկան: Միտն անօթի մնաց, միտ

օր կրկին անօթի մնաց մինչեւ երեկոյ, ու մարդ մ'ալ չեկաւ: յանկարծ դուռը բացուեցաւ, քալի մը զինուոր ու օտարական ներս մտան: մտաբերան հիւանդ ձեր Միտնին հարցուցին ընկերներուն ս'ըր ըլլալու մասին: և երբ իմացան թէ երեկոյն ի վեր ընկերները չեն եկած, իրարու ըսին անպատճառ ստակեցուցած են ալդ գեաւորներն ալ: ու գացին:

Միտն կրկին անօթի մնաց: անօթութիւնը ընկերներու բացակայութիւնը, թուրք ոստիկաններու խորհրդաւոր «ստակեցուցիչ» Միտն բոլորովին յուսահատեցուցին: Ան ընկաւ ծանր, յուսահատական մտածումներու և խոհերու մէջ: Արցունքի կաթիլները սկսան թափել անոր կնճռոտ դէմքին վրայով, երբեմն կանգ առնել խոչնդներու մէջ, ապա կրկին հոսել և անհետանալ ալեխուռն մօրուսին մէջ:

Կրկին դուռը շղկացով մը բացվեցաւ և ներս մտաւ փողոցային խոչոր շուն մը, ահագին հաց մը ճիրանին մէջ բռնած: Միտն բնազդաբար գօշեց— օջա, օջա, սակայն շունը աէրը չեղաւ, քաջվեցաւ անկիւնը և սկսաւ հացը անսորձակով լափել: Ինչպէս կերելի շունն ալ հասկցաւ Միտնին անփութակարութիւնը: Բայց դուռը բաց մնաց: Միտն գրեթէ սողալէն զնայ դուռը գոցեց, և չափազանց յոգնելէն նստեցաւ դռան քով և աչքերը ուղղեց շունը որ անսորձակով կուտէր հացը: Ծունը կերաւ, կշտացաւ և խոչոր կտոր մըն ալ թողոց: Միտն բերնէն ջուրը վաղեց, աչքերը թեմեան որդր աւելի կատաղաբար սկսաւ զինքը տանջել:

Սիսի ըրաւ, մտաբերան շունը և ձեռքը տարաւ հացին: շունը դէմքը խոտոռեց սակայն Միտնին անօթի մարդէն պաշտպանական նախաձեռնքը զսպից փողոցային շան ճարկութիւնը: Միտն սկսաւ հացը ուտել: շունը ոչինչ չըրաւ, այլ միայն կը նայէր: տեսակ մը գլխու նայում քով:

Միտն ալ կշտացաւ ու բացականցեց: — Փառք քեզ Ատուած: նորէն չը թողիր որ անօթի մեռնիմ: թէ և շունի ձեռքով, այնուամենայնիւ հաց հասցուցիր: բայց ի՞նչ կրենն այն անօթի մարդիկ, որոնց երկիրներուն մէջ փողոցային շուներ չը կան, որ աստիկ խոչոր հաց մը դտնան և ինծի պէս թշուառի մը հետ բաժնեն:

Ծունն ալ կարծես հոսկացաւ որ Միտն գոհ է և անոր ընդունելու դուրս ելած խօսքերը իր ըրած բարութեանը համարեն: նա սկսաւ գոհութեամբ պոչը շարժել և ծայրովը Միտնի ուտերը շոյել:

Միտն համոզուեցաւ որ Պոլսոյ փողոցային շները թուրք զինուորներէն և ոստիկաններէն աւելի բարի են:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բարեգործ. ընկերութեան Զ. նիստը տեղի ունեցաւ ամսոյս 11 թ կիրակի օրը, եւ:

Նկատելով վարչական մարմնոյն միամեայ պաշտօնավարութեան լրումը:

Նկատելով ընկերութեան անգամայ մեծ մասին անվճար մնացած բաժնեդիւնները, կազմեց անժամանակեայ յանձնաժողով մը հետեւեալ անձնաւորութիւններէ:

- Տ. Արամ Ա. քոչարեան
  - ՝ Զարար Թէրզեան
  - ՝ Լեւոն Նշանեան
  - ՝ Ճանիկ Գանջանեան
  - ՝ Մանուկ Քետիկեան
  - ՝ Մեխիստեան Մեխիստեան
  - ՝ Մեսրոպ Մեսրոպեան
  - ՝ Յակոբ Արթիսոփ
  - ՝ Յարութիւն Ս. Յարութիւնեան
  - ՝ Սենեքերիմ Մանուկեան
- Եւ պաշտօն տուաւ անոր,

I) Դիմել մի առ մի, բոլոր այն պ. պ. անդամներուն որոնք իրենց բաժնեգրիւնները չեն վճարած՝ մինչեւ նոյեմբ. ամսոյ վերջը, ու զանոնք գանձել:

II) Ընդհ. ժողովոյ անդակագրել բոլոր այն անդամները, որոնք զանազան առարկութիւններով չեն հաճած՝ ընկերութեանս ունեցած իրենց պարտքերը վճարել:

III) Բարոյապէս ջանալ արմատախիլ ընելու իրար ո՛չ հասկացողութեան այն վատ սերմերը որոնք վերջին քանի մը ամիսներու մէջ, պատճառ եղան տրժգունելու ընկերութեանս վարկն ու փայլը:

IV) Պատրաստել ընտրելեաց երկպառակ ցանկը, նոր վարչութեան համար:

Յանձնաժողովը տեւականութիւն պիտի ունենայ երկու երեք շաբաթ. և իր տեղեկագիրը պիտի ներկայացնէ յաջորդաբար ընդհ. ժողովոյ, որ ամէն կիրակի, արտակարգ նիստեր պիտի ունենայ, ժամը երկու քէն սկսեալ, ընկերութեան ընթացիկ խնդիրներու վրայ խորհրդակցելու համար:

Ի գիտաց Բարեգործ. ընդ. ընդ. ժողովոյն

Ատենադպիր Ատենապետ  
ձ. Ալթունեան Զ. Կանիկեան  
Քօնսթանդուպ 11 նոյեմբ.

ՈՐԲԱՆԱՍԸ

—(0)—

Անցեալ օր Գարժում նկատու լուծիւն մը ըրած էր թէ արդեօք կը վայելէ որ որբախնամը Յակոբ Գարպէթեան Հ. Շէֆկի, մը զիւանի աստիճանաւ ունենայ:

Կը պատասխանենք որ ամենեւին չի վայելէր, և նոյն իսկ անպատուարեր է որբախնամին համար: Արդէն որբախնամի միջանի անդամներ, դեռ «Գարժում»-ին այդ նկատու լուծիւնը չեղած, այդ ինքզրով հետաքրքրուած էին:

Մենք կը յուսանք որ որբախնամի անդամները պիտի կրնան իրենց պատիւը բարձր պահել և սուրբ գործ մը աստիճանաւ արարածներու ներկայութեանէն ազատել:

Պ. Ճանկիւլեան, որ ինքզինքը ամպերու մէջէն իջած կը ներկայացնէր, յուսով ենք որ առաջինը պիտի ըլլայ Գարպէթեան Հ. Շէֆկի պէս մարդ մը որբախնամին մէջէն դուրս վանող: Եւ եթէ Ճանկիւլեան աս բանը չընէ, մենք կ'ըլլանք անոր լրտութեան պատճառները պարզելու:

Վառնա 23 նոյեմբ.  
—Անդամ մը:

ՈՐԲԱՆԱՍԸ ԶԵԿՈՅՑ

—(0)—

Հայ գերասանական վէսէլօ խումբը որ պատրաստուած է վաղը Վահան Մամիկոնեան ազգային խմբաբախտը ներկայացնել խնդրեց ընկերութեանս յետաձգել ընդհանուր ժողովոյ Դ. րդ. նիստը:

Դիւանս նկատելով նաեւ թէ ըստ կառավարութեան հրահանգին Ազգ. վարժարանը պիտի մաքրուի ու հականխուի, որոշեց ընկերութեան ընդհ. ժողովոյ Դ. նիստը յետաձգել յառաջիկայ կիրակի 2 դեկտ. կէսօրէն վերջ ժամը 2ին ազգային վարժարանի սրահին մէջ:

(ԿնիԳ)

ՎԵՍԵԼՈ ԽՈՒՄԲԸ

)(--)(

Պէսէլօ խումբը Հայաստանցի գործաւորներին հաճոյք պատճառելու համար որոշել է վաղը ժամը 3ին ճաշից յետոյ, ներկայացնել Պէշիկ Թաշեանի Վ. Հ. Վ. ՄԱՐԿԻՍԻԱՆԻ:

Հայաստանցի բեռնակիրներին խորհուրդ կը տանք, փոխանակ սրճարանների մէջ ժամանակ վատնելու ներկայ գտնվեն այդ ներկայացմանը, ու գոնէ անցեալով մի քիչ մխիթարվեն:





իսկ երեքշաբթի գիշերը ի նպատակ Գ. Երուանդ Երամանի և Լ. Շաքարեանի պիտի ներկայացընեն «Կ Ա Ռ Ս Պ Ա Ն Ը» տրամ 4 արարածով և մի գաւեշտ թրքական կեանքից: պէտք է յուսալ որ հասարակութիւնը իր այցելութեամբ պէտք է վարձատրէ իրեն հաճոյք պատճառով դերասաններին:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պոլսոյ ազգային քաղաքական ժողովոյ ատենապետ Ստեփան փաշա նոյեմբ. 17ին մեռեր է:

Հանգուցեալը 80 տարեկան էր: և Պոլսոյ հին գործիչներէն մին:

— Կաբնոյ առաջնորդարանէն պատրիարքարանի գրուած տեղեկութիւններէն կը հասկցուի որ, երկրաշարժը շատ ազեւալի եղած է եւ ազգային կրթական ու կրօնական շէնքերու նորոգութեան համար 8000 լիրայի շտափ գումարի մը պէտքը կայ:

— Պարսկաստանի հայոց նորընտիր առաջնորդ երիտասարդ Եղիշէ Մ. Վ. Մուրատեաց Դավրէժ հասեր է, ժողովուրդը մեծ շքով ընդունել է երիտասարդ առաջնորդը: Առաջնորդը եկեղեցի երթալով քարոզ մը Բոսնիէ ու բուն մէջ շնչտեր է ինչ ինքը ժողովրդին աջակցութեան պէտքը ունի իր վրան գրուած ծանր պարտականութիւնները կատարելու համար:

Եղիշէ վարդապետ բաւական եռանդոտ մարդ է և կովկասի մէջ եղած ժամանակ բաւական օգտակար հանդիսացած է ժողովրդին: Կը յուսանք որ նոյնը ըլլայ Ատրպատականի պէս թեմի մէջ, ուր եռանդի և գործունէութեան աւելի մեծ պէտքը կը զգացուի և գործելու աւելի ազատութիւն կայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Յրանսական զեւսպան պ. Բօնսթան Սուլթանէն ընդունուեր է տեսակցութեան: Տեսակցութիւնը բաւական երկար տեւեր է:

— Բ. Դուռը հայոց պատրիարքին հաղորդեր է որ ապստամբներու պետ Անդրանիկ կրկին գրաւեր է Մուշի գաւառի մէջ գանուած Արագ վանքը իբ խըմ բովը միասին, թւոք զօրքերը կրկին վանքը շրջապատեր են, ապստամբները վանքի ներսէն հրացան արձակելով զինուոր մը սպաններ են և մէկն ալ վիրաւորեր:

Բ. Դուռը պատրիարքիանէն խնդրեր է որ հաշակցին տեղական իշխանութեանը որը չի ուզեր վանքի վրայ արձակուի գործել, որովհետեւ հոն որքանոց մը կը գտնուի:

— Կը հաղորդեն որ քիւրտերու կողմէն, Պիթիլիսի, Մուշի և Սասունի շրջակայքը անմեղ հայերու վրայ բռնութեան նոր դէպքեր պատահեր են:

Պալք. հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէ որ թուրք կառավարութիւնը այս անգամ խոհեմաբար կը վարուի Անդրանիկի խմբին հանդէպ:

— Թէեւ քանի մը հեռագրիչներ թրքական ազբիւրներէ կը հաղորդեն որ աւազակներէ զբրաւուած Միս Սթօն և իր ընկերուհին սպաննուած են, սակայն այդ լուրը դեռ ստուգուած չէ:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ն Ր Ի Ս

Չը նայելով ծխախոտի գործարանատէրերու կառավարութեան ըրած դիմումներուն, ինչպէս կերելի կառավարութիւնը անպատճառ մտադիր է փոխառութիւնը ընել ծխախոտի (մօնօբօլը երաշխաւորութիւն տալով: Սօֆիայի մէջ Մակեդոնացիներէ և ընդի պուլկարներէ մեծ միթիկ մը տեղի ունեցեր է Բ. Կոմիթէի նախագահ Միխայիլովքին յանդիմանելու համար:

Այդ միթիկը որոշեր է հրաւեր կարգաւ աճէն պուլկարներու ներկայ Բ. Կոմիթէի հետ գործ մը չունենալ և ստիպել որ հրաժարին:

— Մ. Բ. Կ. փոխ նախագահ ժէնէրալ Յօնչէվ մեծամարտի հրաւիրած է «Բօշթա» թերթի խմբագիր Դանկովը, անոր գրած մէկ յարձակողական յօդուածին համար:

Առհասարակ մեծ դժգոհութիւն մը կայ ներկայ գօմիթէին դէմ, եւ ինչպէս կերելի գօմիթէն պարտաւորուած պիտի ըլլայ հրաժարելու:

Ամէն կողմէն նոր համազումար ժողով կը պահանջեն:

Ո Ռ Ի Ս Ի Ս

Նահանգապետը Հելսինգֆօրի մէջ հրատարակած է Չարի հրամանը, որով ֆինլանտական բոլոր զօրքերը կարձակուին իրենց տունները երթալու մինչեւ 1902 մարտ 2ը:

Ո՞վ գիտէ ինչ դժոխային նպատակ մը կայ բարի Զարի այդ հրամանին ետեւը թագնուած:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Լօնտօնէն կը հաղորդեն. կը հաստատուի այն լուրը թէ՛ Չինաստանի և Ռուսիոյ միջև Մանչուրիոյ մասին եղած բանակցութիւնները ընդհատուած են:

— Եանկայէն կը հաղորդեն որ կայսրուհին, հրովարտակով մը իշխան թուանի որդին, որ գահաժառանգէ, այդ իրաւունքէն զրկած է. յայտարարելով որ պօքսէրներու պետի զաւակը չի կրնար այն գահը ժառանգել, որուն գլխուն իր հայրը այնքան փորձանք բերու:

Ի Տ Ա Լ Ի Ա

Անգլիական թերթ մը կը հաղորդէ որ Պապը քանի մը որ առաջ երկարատեւ ուշաթափութիւն մը ունեցեր է, ուժերը կսպառուին և յանկարծակի վտանգ մը կսպասուի:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պրիւքսէլէն կը հաղորդեն՝ պօէր զօրավար Պօթա և Լօրա Գիշնէր զինադադար մը ընելու համար՝ բանակցութեանց մէջ կը գտնուին:

Վառնայի պուլկ. ուսուցչ. ընկ. հասակաւորներու համար գիշերային դասախօսութիւններ կազմակերպած է:

Հայերէն պիտի դասախօսէ ազգային վարժարանի ուսուցիչ պ. Մարտիկ Յովհաննէսեան: փափաքողները իրենց անունները պիտի արձանագրեն դաշ եօլի Ս. Մէթօտի վարժարանը. ամէն օր ժամը 7—9ը կէս օրէն յետոյ:

Դասախօսութիւնները պիտի սկսուին ամսոյ 26ին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յիլիպէի «Հայկական երգեցիկ խումբը» աս շրջանին մէջ վերսկսած ըլլալով արդէն իր պարագմունքները, ձեռնարկած է նաեւ պարբերաբար հրատարակելու եւրոպական ձայնագրութեամբ հայկական հին եւ նոր քառաձայն երգեր, մաքուր թղթի վրայ. յստակ վիճագիր:

Այդ առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը նորկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտասէր հայ երիտասարդութեան, որ եթէ ատ երգերէն փափաքողներ կան, հաճին դիմել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» համար 20 սանթիմ. փոստի ծախսը մեր վրայ, Կոն երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղկանան:

Արտասահմանի համար 35 սնթ. Յիլիպէ վարչ. «Հայկ. երգեցիկ խումբին»:

Հասցէ՝ Agop Sivadjian Philippopol

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայդերբերգում հիմնել է մի գրադարան, որ նպատակ է գրել ծանօթացընել արտասահմանի հայ ուսանողութեան և ընդհանրապէս հետաքրքրող անձանց հայոց ներկայ կեանքին վերաբերել հայերէն եւ օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ: Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համեմատ թիւ որի համար յայտնուի ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը եւ խնդրում ենք այն անձանց հաստատութիւններին, որոնք կամենում են գրքերով եւ գլխաւորութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցէով՝

A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

ԵՆՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ գիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝

Իւնիօն Տէրօյիսիան Արմ.

Լ'Esport rive sur l'Esport sur Եիլի 2

Սուխ Ժրնէվ

Կարգուիր Յանձնաժողով

ԽՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւտմս, հասցեւտմս, նամակազուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազը:

Գիները յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻՆ

ԱԶԻ

Բաղէշի կուսակալութեան պատկանեալ Յուրդափ գիւղէն Պէկօ Ասատուրեանի, հաստատակաղմ շէկ պէխով ու յօնքերով, 6 ամիսէն յի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարգասիրութեան թող իր այրի տիկին մայրը միթիւտարել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով:

ՕՏՎՈՐՈՒՅԻ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна